ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գամիրք գավառի հայերի մասին մինչև այժմ մի ամբողջական պատմա-ազգագրական ուսումնասիրություն դեռևս չէ գրված, եթե նկատի չունենանք Գամիրքի առանձին վայրերի մասին գրված մի քանի աշխատությունները։ Այդ երկասիրությունների մեջ առաջին տեղը գրավում է Արշակ Ալպոյաճյանի «Պատմություն հայ Կեսարիո» աշխատությունը։ Ուշադրության արժանի են նաև Աղեքսանդր վարդապետ Անդրեասյանի «Ականավոր քաղաքին Սեբաստիո պատմությունը», Ա. Քեչյանի «Ակն և ակնցիք» աշխատությունը, ինչպես նաև գերմանացի գիտնական Ցիմմերերի «Կապադովկիա»-ն[1]։

Ա. Ալպոյաճյանի «Պատմություն հայ Կեսարիո» երկհատոր աշխատության մեջ ի մի են բերված Կեսարիա քաղաքի և նրա շրջակայքի հայության վերաբերյալ պատմական, տեղագրական և ազգագրական բազմապիսի նյութեր, որոնք անշուշտ շատ արժեքավոր են ապագա ուսումնասիրողների համար։ Աղեքսանդր Անդրեասյանի «Ականավոր քաղաքին Սեբաստիո պատմությունը» պատմա-աշխարհագրական մի երկասիրություն է, նվիրված Սեբաստիայի վանքերի, եկեղեցիների նկարագրությանը, ինչպես և Սեբաստիայի շրջանում տեղի ունեցած քաղաքական անցքերին, իսկ «Ակն և ակնցիք» արժեքավոր ժողովածուն նվիրված է Ակնի բանահյուսությանը, բարբառին և կենցաղային սովորություններին։ Ինչ վերաբերում է Ցիմմերերի «Կապադովկիա» աշխատությանը, որ Հ. Տուշյանը որոշ մեկնաբանական փոփոխություններով թարգմանել է «Գամիրք» անվան տակ, նույնպես մի պատմա-աշխարհագրական երկասիրություն է, որտեղ գլխավորապես խոսվում է բուն Գամիրքի հակառակ ուղղությամբ՝ Կեսարիայից Իկոնիա (այժմ Գոնյա) ընկած այսպես ասած «Քարայրների երկրի» մասին։

Գամիրքի առանձին վայրերի մասին նշված աշխատություններից «Պատմություն հայ Կեսարիո» և «Ակն և ակնցիք»-ի մեջ թեև կան տեղեկություններ տվյալ շրջանների սոցիալ-տնտեսական կյանքի, կուլտուր-կենցաղային սովորությունների մասին, սակայն նրանցից յուրաքանչյուրում տրվում է միայն կոնկրետ շրջանի նկարագրությունը և, նույնիսկ փոքր-ինչ համեմատություն չի անցկացվում Գամիրքի մյուս շրջանների հետ։

Այսպիսով, ձեռնամուխ լինելով «Գամիրքի հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրություն)» աշխատությանը, մեր գլխավոր նպատակն է եղել քննության առարկա դարձնել՝ ա) Գամիրքի ծագման և տեղադրման հարցը, բ) Գամիրքը Պարսկաստանի և հռոմեական տիրապետության ժամանակ, գ) միջնադարում Գամիրքի հայ ազգաբնակչության համալրումը Հա-

---

[1] Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիո, Գահիրե, 1937, Աղեքսանդր վարդապետ Անդրեասյան, Ականավոր քաղաքին Սեբաստիո պատմությունը, Վենետիկ, 1911, Ցիմմերեր, Գամիրք, «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1900, Ա. Քեչյան, Ակն և ակնցիք, Փարիզ, 1952։

յաստանի ներքին գավառներից գաղթած հայերով. դ) կենցաղն ու կուլտուրան, ե) Գամիրքի հայերի ազգակցական, ընտանեկան և հարսանեկան փոխհարաբերությունները։

Նկատի ունենալով մեր աշխատության ծավալի հնարավորությունները և հաշվի առնելով Գամիրքի գյուղական տնտեսության հայկական մյուս գավառների հետ ունեցած ընդհանրությունը, անհրաժեշտ չհամարվեց առանձին գլուխ հատկացնել երկրագործությանը, անասնապահությանը և այգեգործությանը*։ Սակայն, պատմա-աշխարհագրական, տեղագրական և այլ համապատասխան բաժիններում խոսվում է նաև յուրաքանչյուր շրջանի տնտեսական զբաղմունքների, արտադրությունների առանձնահատկությունների մասին։ Ինչ վերաբերում է բանահյուսությանը և հոգևոր կուլտուրային, ապա դրանք, հնարավորության չափ օգտագործված են միայն Գամիրքի հայերի կենցաղն ու կուլտուրան բացահայտելու նպատակով։

Աշխատությունը գրելիս նկատի ենք ունեցել ոչ միայն Գամիրքի առանձին վայրերի մասին լույս տեսած հայերեն աշխատությունները, այլև Կապադովկիայում հայտնաբերված խեթական, ասորեստանյան, ուրարտական արձանագրությունների վերջին արդյունքները, նյութական կուլտուրայի մնացուկները, ինչպես նաև. հիշողություններ, լրագրային հոդվածներ, ճանապարհորդական նոթեր և մինչև այժմ այդ գավառի մասին օտար լեզվով եղած համարյա ամբողջ գրականությունը։ Բացի այդ, երկու տասնյակ տարիների ընթացքում հավաքված հարուստ նյութի հիման վրա աշխատել ենք ընդհանրացումների միջոցով հանգել կոնկրետ եզրակացությունների։

Ես իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում հանգուցյալ ուսուցիչ Միհրան Տոնապետյանին, Մարիամ Տոնապետյանին, Իսկանդար (Աղեքսանդր) Դեմիրճյանին, Տիդրանուհի Պահլավունուն. որոնք կարևոր տեղեկություններ հաղորդեցին իրենց ծննդավայր Կեմերեկի մասին։ Ինչպես նաև դասախոս Մինաս Մինասյանին, Հակոբ Ճղրլյանին, Տաճատ Աղայեկյանին. Նշան Ժամկոչյանին, Վահան Սուքիասյանին, Սեդրակ Աժդահարյանին, Կարապետ Քեշիշյանին, Սամվել (Սանթուր) Կյուլապյանին և հասարակական գործիչ Պատրիկ Սելյանին, Կյուրինի, Սերաստիայի, Խորսանա գյուղի, Տիվրիկի, Արարկիրի, Ճյուճյուն գյուղի, Թալաս գյուղաքաղաքի մասին կարևոր և հետաքրքիր տեղեկություններ հաղորդելու համար։

ՀԵՂԻՆԱԿ

1950 թ. մարտի 25
ք. Երևան

---

* Գամիրքահայերի հոգևոր մշակույթին, բանահյուսությանը, հուշարձաններին վերաբերող նյութերը առանձին բաժիններ են կազմում, որոնք մասամբ են միայն տեղ գտել սույն աշխատության մեջ։